ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ

ԺՈՐԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՔԱՂԱՔԱՄԱՅՐ ԱՐՏԱՇԱՏԸ 2200 ՏԱՐԵԿԱՆ Է

«Զի թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար, եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի...»

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ (Ա, Գ)

Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո (Ք.ծ.ա. 323 թ.) նրա նվաճած երկրները բաժանվեցին զորավարների (դիադոխների) միջև: Մեծ մասը, գրեթե բոլոր ասիական տարածքները ժառանգեց Սելեւկոս Նիկատորը (Ք.ծ.ա 312-281): Վերջինիս՝ Սելեւկյան կայսրության մեջ մտնող հայկական պետությունները՝ Մեծ Հայքը, Ծոփքը, Փոքր Հայ-քը, Կապադովկիան, Պոնտոսը, Ատրպատականը պահպանում էին ներքին ինքնավարությունը, կառավարվում իրենց թագավորների կողմից[1]: Սելեւկյան տերությունը Ք.ծ.ա. III դարում, երկպառակությունների, ապստամբությունների ու մշտական պատերազմների թափերաբեմ դառնալով թուլացավ: Սելեւկյան տերությունից անջատվեցին Բակտրիան, Պարթեւստանը եւ այլ տարածքներ: Անտիոքոս III Մեծը (Ք.ծ.ա. 223-187 թթ.), փորձեց վերականգնել կայսրության երբեմնի հզորությունը: Ք.ծ.ա. 202-201 թթ. նա Արտաշեսին[2] Մեծ Հայքի, Զարեհին Ծոփքի սատրապեցներ (կառավարիչներ) նշանակեց եւ զորքով Հայաստան ուղարկեց, որը կառավարում էր Երվանդ Վերջինը: Մովսես Խորենացու վկայության համաձայն դաժան զինաբախումներ են տեղի ունենում Երվանդ Վերջինի եւ Արտաշեսի միջեւ[3]: Երվանդը սպանվում է:

Հաղթանակով են պսակվում Անտիոքոս Երրորդի արշավանքները Արեւելքում: Ամ-րապնդվում են կայսրության դիրքերը: Այդուհանդերձ նա չկարողացավ դիմակայել հռոմեական բանակին: Ք.ծ.ա. 191-ին նավատորմը հռոմեացիներից ջախջախիչ պարտություն կրեց Թերմոպիլում, այնուհետեւ Ք.ծ.ա. 190-ին Մագնեսիայի ճակա-տամարտում

1 Տե՛ս **Նակոր Մանանդյան,** Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Արշակունիների հաստատումը Հայաստանում (66թ. մ.թ.), Երկեր Ա, Երեւան, 1977, էջ 106:

2 Տե՛ս **Գեւորգ Տիրացյան,** Մովսես Խորենացու «Հայոց պատմության» եւ Ստրաբոնի «Աշխարհագրության» մի քանի փվյալներ Հայաստանի ն.մ.թ. III-II դարերի պատմության մասին, «Բանբեր Մատենադարանի», 6, Երեւան, 1962, էջ 17. **Э. Бикерман.** Государство Селевкидов.М., 1985, էջ 156:

3 «Հայ Ժողովրդի պատմություն», հ. I, Երեւան, 1971, էջ 521. **Գ. Տիրացյան,** նշվ. աշխ., էջ 19-20:

հռոմեական բանակից կրկնակի ավելի զորքերից խայտառակ պարտություն կրեց[4]: Ք.ծ.ա. 188 թ. Ապամեայի պայմանագրով ազդարարվեց ելևէջյան կայսրության անկման սկզբը[5]:

Արմենիայի ստրատեգներ Արտաշեսն ու Զարեհը օգտվելով պատերազմի ելքից 189թ. անցան հռոմեացիների կողմը եւ իրենց անկախ թագավորներ հռչակեցին:

Տարածքով ամենամեծը Մեծ Հայքն էր: Պոլիբիոսը նշում է, որ «Արմենիայի մեծա-գույն մասի կառավարիչն է Արտաշեսը»[6]:

Արտաշես Առաջինը մի շարք արմատական բարեփոխումներ կատարեց տնտեսական, ռազմական, մշակութային եւ այլ ոլորտներում: Ըստ Ստրաբոնի եւ Պլուտարքոսի 189/188 թթ. Արտաշեսի արքունիքում ապաստանել էր Անտիոքոս Մեծի խորհրդական, նշանավոր զորավար, Հռոմի ոխերիմ թշնամի Հաննիբալը: Վերջինս Արտաշեսի արքունիքում կատարում էր խորհրդականի դերը: Բնականաբար ժամանակի ամենահզոր հռոմեական բանակի մարտավարությանը քաջածանոթ լինելով, առաջին հերթին վերակազմավորվելու էր հայկական բանակը: Այն նպաստելու էր Արտաշեսին Մեծ Հայքի հարեւանությամբ գտնվող երկրներից գրավել 15 նահանգ, եւ միացնել Մեծ Հայքին: Նա անցավ նաեւ Կուր գետի ձախ ափը եւ այստեղ նվաճեց հողեր: Այդ առիթով Ստրաբոնը գրում է. «Պատմում են, Արմենիան եղել է առաջ փոքր եւ մեծացել է Արտաքսիասի (Արտաշեսի) եւ Զարիադրիսի (Զարեհի) ձեռքով, որոնք նախապես Անտիոքոս Մեծի զորավարներն էին եւ նրա անկումից հետո թագավորեցին՝ Զարեհը Ծոփքի, Ակիսենեսի, Օդոմանտիսի եւ մի քանի այլ գավառների վրա, իսկ Արտաշեսը Արտաշատի շուրջը գտնվող երկրի վրա: Սրանք ընդարձակեցին իրենց երկրների սահմանները եւ գրավեցին շրջակա ժողովուրդներից հետեւյալ շրջանները. մեդացիներից՝ Կասպիանեն, Փավնիտիսը եւ Բոսորոպենդան, իբերներից՝ Պարիադրեսի լեռնալանջերը, Խորզենեն եւ Գոգարենեն, որ գտնվում է Կուր գետի մյուս կողմում, խալյուբներից եւ մոսինոյկներից՝ Կարենիտիսը եւ Դերքսենեն, որոնք սահմանակից են Փոքր Հայքին կամ նրա մասերն են, կապառոններից՝ Ակիլիսենեն եւ Անտիտավրոսի կողմերը գտնվող երկիրը եւ ասորիներից՝ Տամորիտիսը. Այնպես որ բոլորը միալեզու եղան»[7]:

Մեծ Հայքում Մագնեսիայի ճակատամարտից հետո Ք.ծ.ա. 189 թ. հայկական նոր անկախ պետության ստեղծումը Արտաշես Առաջինի (Ք.ծ.ա. 189-160 թթ.) գլխավորությամբ շրջադարձային հանդիսացավ հայ ժողովրդի պատմության մեջ:

Արտաշիսյան արքայատան հիմնադիր՝ Արտաշես Առաջինը Հայաստանի ամենախոշոր քաղաքական ու ռազմական գործիչն էր, որը, սակայն, պատմագիտության մեջ չի ստացել իր արժանի գնահատականը[8]: Արտաշես Առաջին արքայի օրոք ձեւավորվեց պատմական Մեծ Հայքը Հայկական լեռնաշխարհում: Այն ընդգրկում էր Հյուսիսային Միջագետքից մինչեւ Կուր գետը եւ Ատրպատականից մինչեւ Ծոփք եւ Փոքր Հայք ընկած տարածքները:

---

4 Տե՛ս **Մովսէս Խորենացի,** Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը եւ Ներածությունը, Մ. Աբեղյանի եւ Ս.Հարությունեանի (նմանահանութիւն), Լրացումները Ա.Բ. Սարգսեանի, Երեւան, 1991, II, 48:

5 Տե՛ս **Г. Бенгтсон,** Правители эпохи эллинизма, М., 1982, էջ 220:

6 Տե՛ս **Polyb,** XXV, 2, 12. **Ն. Մանանդյան,** նշվ. աշխ., էջ 120:

7 Տե՛ս **Strabo,** XI, 14, 5 (528): Ստրաբոնի եւ Պլուտարքոսի թարգմանության հատվածները վերցված են Ն. Մանանդյանի նշված աշխատանքից:

8 Տե՛ս **ՀԺՊ,** I, էջ 526-536-537:

Մեծն Արտաշես Առաջինի գլխավորությամբ Մեծ Հայքն այնքան հզորացավ ու ընդարձակվեց, որ դարձավ տարածաշրջանի հզոր տերություններից մեկը[9], որի հետ հաշվի էին նստում կոնֆլիկտների միջոցին եւ միջպետական հարաբերությունների[10] ժամանակ:

Մեծ Հայքի ընդարձակումից հետո, երբ երկիրը բազմամարդ դարձավ եւ հարստացավ, Արտաշես Առաջինը տնտեսական կարեւոր բարեփոխումներ կատարեց. հողերը բաժանեց եւ մարդահամար իրականացրեց: Մովսես Խորենացին այդ առիթով գրում է. «Զեր ամենայն առաքինութեանց եւ գործոց ուղղութեանց Արտաշիսի, հրամայէ զսահմանս գիւղից եւ ազարակաց որոշել. Քանզի բազմամարդացոյց զաշխարհս Հայոց, եկամուտս բազումս ածելով ազգս, եւ բնակեցուցանելով ի լերինս եւ ի հովիտս եւ ի դաշտս: Եւ նշանս սահմանացն հաստատեաց այսպէս. հրաման տալով քարինս կոփել չորեքկուսիս, եւ պնակաձեւ փոսել զմէջսն, ծածկելով յերկրի. չորեքկուսիս ի վերայ յարուցանել ամբարտակս, սակաւ ինչ բարձրագոյն յերկրէ»: «Բայց ասի, ի ժամանակս Արտաշիսի ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ոչ լեռնային եւ ոչ դաշտային, յաղագս շինութեան երկրիս»[11]: Այդ են վկայում նաեւ Արտաշես Առաջինի կանգնեցրած սահմանաքարերը, որոնք վկայում են նաեւ Արտաշես Առաջինի ծագումնաբանության եւ պատվատիտղոսների մասին: Հայտնաբերված սահմանաքարերի թիվն այսօր 16 է: Լայնացել է նաեւ դրանց աշխարհագրությունը՝ Գեղարքունիք՝ Կարմիր, Ալբերդ, Վաղաշեն, Լիճք, Ծակքար եւ այլուր[12], Զանգեզուր՝ Իշխանասար, Սիսիան-Գորիս ճանապարհ, Դիլիջանի եւ Իջեւանի միջեւ Թեղուտ գյուղից, Սպիտակի մերձակայքից եւ այլն: Դրանք բազալտ քարից են, դեպի վեր լայնացող, վերեւում երեք կլորավուն ատամներով, ներքեւում քարի (ժայռի) մեջ ամրացնելու պռչուկով, որպեսզի ուղղահայաց դիրքով լինի: Հայաստանի արտաշիսյան սահմանաքարերի վրայի արամեերեն արձանագրությունները նման են փոքրասիական արձանագրություններին[13]: Արամեերենը Հայաստանում եղել է պետական պաշտոնական լեզու: Արամեերեն արձանագրությունների բովանդակություններն իրարից տարբերվում են: Օրինակ «Արտաշես արքան Զարեհի որդին Երվանդական բաժանեց հողը մասերի (բաժինների)»:[14] «Արտաշես արքա Երվանդունի վեհը, որդի Զարեհի, բաժանող հողը, այստեղ (այսինչ) գյուղի մեջ», «Արտաշես արքա «բարի» Երվանդական Զարեհի որդի եւ թագադիր Նիկեփորը (կամ Նեկփառը) Աիշահրսարտի որդին»:[15] Այսինքն, Արտաշես Առաջինը հրամայում է հողաբաժանություն կատարել գյուղի մեջ, եւ որոշել գյուղերի եւ ագարակների սահմանները: Այնուհետեւ արձանագրություններից պարզ է դառնում, որ նա Զարեհի որդին է, իրեն համարում է Երվանդական, որ ինքն օրինական թագավոր է:

---

9 **ՀԺՊ,** I, էջ 526-536-537:

10 Տե՛ս անդ, էջ 545-546, **Ն. Մանանդյան** նշվ. աշխ., էջ 123:

11 **Մովսէս Խորենացի,** II. ծգ 56.:

12 Տե՛ս **A. Perikhanian**. Les inscrintions, aramnennes du roi Artachns, "Revue des tudes Aramnenes". 1971, n, VIII, S. 169, **Գ. Տիրացյան,** Արտաշես I-ի եւս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն, ՊԲՀ, 1977, թ. 4, էջ 254-259:

13 Տե՛ս **А.Я. Борисов,** Надписи Артаксия (Арташеса), царя Армении: §Вестник древней истори| (ՌԺԻ.), 1946, թ. 2, էջ 98-100:

14 **Գ. Տիրացյան,** Արտաշես Ա-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը. « Տեղեկագիր» (հաս. գիտ.) 1957, թ. 10 էջ 107:

15 **А. Г. Периханян,** Арамейская надпись из Зангезура , д´Р, 1965, թ. 4 եւ այլն:

Արձանագրություններում հելլենիստական մյուս երկրների թագավորների նման նշվում են Արտաշես Առաջինի պատվատիտղոսները:

Արտաշես Առաջինը Թեղուտի եւ Ջանգեզուրի արձանագրություններում իր ընդարձակ տիտղոսաշարում իրեն անվանում է «թագակիր», «հաղթական», «իշխանությամբ օժտված»: Վերջին էպիտետը Քսանթոսի եռալեզու արձանագրության (հունարեն, արամեերեն, լիկիերեն) հետ համեմատելով Վ. Լիվշիցը բացատրում է որպես Միհր-Ապոլոնի հովանավորության տակ գտնվող[16]:

Նրա կարեւորագույն գործերից մեկը, միավորված Հայաստանի նոր մայրաքաղաքի՝ Արտաշատի (Artaxiasata, Artaxata, Արտաշեսի ուրախություն) հիմնադրումն էր: Արտաշատը գտնվում էր Արարատյան դաշտում, շքեղաշուք Արարատ լեռան դիմաց, Արաքս եւ Մեծամոր գետերի միախառնման տեղում ստեղծված թերակղզու, տասներկու մեծ ու փոքր բլուրների վրա, միջազգային առեւտրական բանուկ ճանապարհների խաչմերուկում: Տեղի անթերի ընտրությունը կատարված էր, թե ստրատեգիական, եւ թե տնտեսական առումով: Տեղանքը համապատասխանում էր բոլոր այն պահանջներին, որոնք, ըստ անտիկ հեղինակների, անհրաժեշտ էին քաղաքի կառուցման համար[17]:

Արարատյան դաշտը հնարավորություն էր ընձեռում զբաղվելու հողագործությամբ եւ ստեղծելու քաղաքամերձ գյուղատնտեսական ընդարձակ շրջան: Արաքսի եւ Մեծամորի ջրերը թույլ էին տալիս մշակելի հողերը ոռոգել: Գետերը հարուստ էին ձկներով, իսկ նրանց թավուտներն ու եղեգնուտները՝ որսի կենդանիներով:Ինչպես պատմիչն է գրում՝ «...զգաւառն Այրարատու, զհոյակապն եւ զհռչակաւորն եւ զգանաւորն, զամենաբոյսն, զամենաբուղխն, զամենալին, զամենագիւտն ի շահս եւ ի դարմանս մարդկային պիտոյիցս կենաց եւ վայելչութեան եւ սթափութեան, զդաշտս մեծատարածս եւ որսալիցս.», «...զչնաշխարհիկ եւ զամենալի ըստ տուչութեան ամենախնամ արար Աստուծոյ, զԱյրարատեան գաւառ, որ է գլուխ աշխարհիս Հայոց, զգաւառն համբաւատենչ, զգաւառն ամենալի, որ բերէ յինքեան զօրինակ լիութեան, ...զդրախտն Աստուծոյ»[18] :

Բարենպաստ պայմանների շնորհիվ, Արտաշատը բուռն վերելք ապրեց, շուտով դարձավ ոչ միայն Հայաստանի վարչական, քաղաքական, կրոնական, տնտեսական ու մշակութային խոշոր կենտրոնը, այլեւ անտիկ աշխարհի մեծ ու նշանավոր քաղաքներից մեկը: Ըստ Ստրաբոնի եւ Պլուտարքոսի Արտաշատի տեղը ընտրել ու հատակագիծը կազմել է Կարթագենի հռչակավոր զորավար Հաննիբալը: Ստրաբոնը գրում է. «Հայաստանի քաղաքներն են՝ Արտաքսատան (որն անվանում են նաեւ Արտաքսասատա եւ որը հիմնել էր Հաննիբալն Արտաշեսի համար) եւ Արքսատան. Ատրպատականի սահմանների մոտ, իսկ Արտաքսատան՝ Արաքսյան դաշտի մոտ: Այս վերջինը գեղեցիկ է շինված եւ երկրի

16 **В.А. Лившиц.** Трилингва из Ксанфа и надписи Артаксия. §VIII всесоюзная конференция по древнему Востоку, посвященная памяти акад. В.В. Струве|. Тезисы докладов . М., 1979, с. 54-55. **А. Г. Периханян,** Материалы к этимологичскому словарю древнеармянского языка. Ч.I Ереван, 1993, с.6.

17 Տե՛ս §Архитектура античного мира|, М., 1940, їз 33. **Витрувий.** Десять книг об архитектуре, пер. **Ф.А. Петровского**. Т.1, М., 1936, с. 32-33; **Մովսէս Խորենացի,** 16, II, 39, III, 59. **Ժ.Դ. Խաչատրյան,** Հայաստանի անտիկ շրջանի քաղաքներն ու քաղաքաշինությունն ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության», ՊԲՀ, 1998, թ. 1-2, էջ 179-188:

18 **Ղազար Փարպեցի**, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1982, էջ 20, 24

Նկ. 1 Արտաշատ քաղաքի ընդհանուր հատակագիծը

Նկ. 2 Վերին քաղաքի՝ բլուրների վրա բացված հատվածի պարիսպների հատակագիծը

Նկ. 3 Միջնաբերդի պարսպի մի հատված



Նկ. 4 Ուրարտական պարսպի եւ հելլենիստական շրջանի մուտքի վերակազմություն (Ք. ծ. ա. III դ.)

Նկ. 5 Ութերորդ բլրի վրա բացված թաղամասի ընդհանուր տեսքը

Նկ. 6 Թեղուտից հայտնաբերված Արտաշես Առաջինի արամերեն արձանագրությունը (Ք. ծ. ա. III դ.)



Նկ. 7 Առաջին բլրի հատակագիծը (Ք. ծ. ա. III դ.)

Նկ. 8 Խոր Վիրապ տանող ճանապարհի եզրին բացված բնակավայրի մի հատված, ուրարտական խեցեղեն թրծելու շրջանաձեւ հնոցներով

Նկ. 9 Արտաշատ քաղաքի դրամի դիմերեսի՝ Անահիտ-Տիխեի պատկերը (Ք. ծ. հ. IV-VI դդ.)

Նկ. 10 Արտաշատ քաղաքի դրամի դարձերեսի Նիկա Վիկտորիայի պատկերը



Նկ. 11 Արաքսի ափին բացված Ապոլոն-Տիրի տաճարի հարթակի աստիճանների եւ հասարակական բաղնիքի ընդհանուր տեսարան

Նկ. 12 Հասարակական բաղնիքի կրակարաններից մեկը

թագավորանիստ քաղաքն է: Նա գտնվում է գետաձոցում, որը նման է թերակղզու, եւ նրա շուրջը, բացի պարանոցի մասից՝ գետի առջեւ ձգվում է պարիսպը, իսկ պարանոցը փակված է խրամով եւ պատվարով» (Strabo, XI. 14, 6):

Որ Արտաշատը կառուցված էր Հաննիբալի խորհրդով եւ նրա ցուցումներով՝ այդ մանրամասն հաղորդում է Պլուտարքոսը. «Պատմում են, որ երբ Անտիոքոսը պարտություն կրեց հռոմեացիներից՝ կարթագենացի Հաննիբալը եկավ Արտաշես Արմենի մոտ եւ հրահանգիչ ու խորհրդատու դարձավ բազմաթիվ օգտավետ գործերում: Նկատելով, բացի այդ, այս երկրում չօգտագործված ու անտես արված հարմարագույն ու խիստ հաճելի մի վայր՝ նա այդ տեղում ուրվագծեց քաղաքի հատակագիծը: Հաննիբալը տարավ Արտաշեսին, ցույց տվեց հատակագիծը եւ համոզեց հիմնել այդ տեղում քաղաք: Թագավորն ուրախությամբ համաձայնեց եւ խնդրեց, որ նա իր վրա վերցնի այդ գործի ղեկավարությունը: Այդպիսով կառուցվեց մեծ ու խիստ գեղեցիկ քաղաք, որն անվանվեց թագավորի անունով եւ հայտարարվեց Հայաստանի մայրաքաղաք» (Plut., Lucullus, XXXI, 5):

Արտաշատի կառուցման ժամանակի մասին կարծիքները տարբեր են: Կարծում ենք, Արտաշատի հիմնադրման ամենահավանական ժամանակը Ք.ծ.ա. 189/188 թվականներն են[19]:

Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրմանը հանգամանորեն անդրադարձել է Մովսես Խորենացին. «Երթեալ Արտաշիսի ի տեղին, ուր խառնին Երասխ եւ Մեծամօր եւ հաճեալ ընդ բլուրն՝ շինէ քաղաք յիւր անուն անուանեալ Արտաշատ: Ձեռնտու լինի նմա եւ Երասխ փայտիւք մայրեաց. վասն որոյ անաշխատ եւ երագ շինեալ՝ կանգնէ ի նմա մեհեան, եւ փոխէ ի նա ի Բագարանէ զպատկերն Արտեմիդեայ եւ զամենայն կուռս հայրենիս, բայց զԱպողոնի պատկերն արտաքոյ քաղաքին կանգնէ հուպ ի ճանապարհն: Եւ յարուցանէ ի քաղաքէն Երուանդայ զգերութիւն Հրէիցն, որ վայելչութիւն քաղաքին Երուանդայ, զոր տարեալ էր յԱրմաւրայ եւ զոր անդէն արարեալ նորա՝ փոխէ յԱրտաշատ. եւ առաւել եւս յինքենէ յօրինէ իբրեւ զքաղաք արքայանիստ»[20]:

Այս ամենից հետեւում է, որ Արտաշատը կառուցվել է նախապես մտածված միասնական հատակագծով, թագավորի կամքով ու ցուցումով: Արտաշատը տերության պաշտամունքային կարեւորագույն կենտրոնն էր: Այստեղ էր գտնվում Անահիտի տաճարը (VI բլրի վրա)[21]: Բագարանից այնտեղ է տեղափոխվում Անահիտի արձանը, բոլոր հայրենական կուռքերը, իսկ Արեգ-Միհր-Ապոլոնի արձանը իբրեւ առեւտրի ասված Հերմես, կանգնեցվեց քաղաքից դուրս: Անահիտը Հայաստան աշխարհի եւ Արտաշատի, Միհրը՝ Արտաշիսյան, այնուհետեւ Արշակունի թագավորների հովանավոր ասված էր:

1970 թ. սկսված պեղումները երեւան բերեցին հարուստ ու բազմատեսակ նյութեր, որոնք բացահայտեցին քաղաքի բազմակողմանի զարգացած մշակույթի բնույթը: Պարզվեց, որ Արտաշատ քաղաքի բլուրները բնակեցված են եղել տակավին վաղ երկրագործական շրջանում: Քաղաքի VII եւ VIII բլուրներում հայտնաբերվել են Ք.ծ.ա. V հազարամյակի բնավայրի հնագիտական մնացորդները:

---

19 Տե՛ս **Ժ.Դ. Խաչատրյան,** Հայաստանի անտիկ շրջանի քաղաքներն ու քաղաքաշինությունը, էջ 181-188, ծան:

20 **Մովսէս Խորենացի**, II, 49:

21 Բլուրների համարակալումը արշավախմբինն է:

Անակնկալ էր անտիկ Արտաշատի տարածքում ուրարտական քաղաքի հայտնաբերումը, որը մինչ այդ անհայտ էր գիտությանը: Ուրարտական քաղաքը, որի միջնաբերդը գտնվել է երկրորդ բլրի վրա, զբաղեցնում է հսկայական տարածք:

Պեղումներով բացահայտվեց, որ Արտաշես Առաջինը վերականգնել է ուրարտական պարսպապատը:

Արտաշատի պեղումները կարեւոր աղբյուր հանդիսացան Հայաստանի հելլենիստական եւ ուշ անտիկ շրջանի պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար: Արտաշատի պեղումների շնորհիվ հնարավոր դարձավ ուսումնասիրել Հայաստանի անտիկ շրջանի քաղաքաշինությունը: Անհրաժեշտ էր որոշել քաղաքի տեղադրությունը, սահմանները, որի նշանակությունը կարեւոր է հետազոտության համար: Թեւեւ Ստրաբոնը (XI, 14, 6), Տակիտոսը (Ann., XIII, 39), եւ Մովսես Խորենացին (II, 49), այլ հեղինակներ հուշում են Արտաշատի գտնվելու վայրը, սակայն, տեւական ժամանակ այն անորոշ է եղել: Հայտնվել են իրարամերժ կարծիքներ[22]:

Պեղումներով պարզվեց, որ քաղաքն ավելի մեծ է եղել, քան ենթադրվում էր: Արտաշատը զբաղեցրել է Խոր Վիրապի տասներկու բլուրները եւ հարթավայրի հարավային եւ հարավ-արեւելյան հատվածները, Արտաշեսի կառուցած Արաքս եւ Մեծամոր գետերը միացնող ջրանցքը: Արեւմտյան մասում III եւ IV բլուրների դիմաց բլրակների վրա գտնվում է քաղաքի դամբանադաշտերից մեկը:

Արտաշատ քաղաքի հարավային սահմանը Արաքսն է: Ինչպես վկայում են նաեւ Ստրաբոնը (XI, 14, 6) եւ Կորնելիոս Տակիտոսը (Ann., XIII, 39), արեւելյան եւ հարավ-արեւելյան սահմանը՝ Մեծամոր գետն է: Տիգրան Երկրորդը հելլենիստական երկրներից գաղթեցված բնակչության մի մասին բնակեցրեց Արտաշատում: Եւ արդեն Ք.ծ.ա. I դ. երկրորդ կեսին քաղաքն զբաղեցրել է Մեծամոր եւ Արաքս (Երասխ) գետերի միջեւ ընկած ամբողջ եռանկյունին: Իր ծաղկման շրջանում Ք.ծ.հ. I-II դդ. Տրդատ Առաջի-նի կողմից քաղաքի վերականգնումից հետո, Արտաշատն իր գերեզմանատներով զբաղեցրել է շուրջ 400 հա տարածություն: Քաղաքն ունեցել է ավելի քան 150 հազար բնակչություն[23]: Իր տարածքով եւ բնակչության թվով, հելլենիստական քաղաքների հետ համեմատած, Արտաշատը հին Արեւելքի խոշոր քաղաքներից մեկն էր:

Արտաշատն ավերվել է մի քանի անգամ, կառուցվել ու վերակառուցվել: Ք.ծ.հ. 368-369 թթ., քաղաքի ավերումը Շապուհ II-ի կողմից եւ բնակչության գերավարումով: Այնուհետեւ Արտաշատում կյանքը շարունակվում է վեցերորդ բլրի վրա, որտեղ գտնվում էր եկեղեցին, եւ նրանից հարավ եւ արեւմուտք ընկած հարթավայրում[24] Արաքսի ափին գտնվող բլրակի մերձակայքում: Այն ավանդաբար շարունակում է կատարել նաեւ առեւտրական կենտրոնի դերը: Իրենից հետաքրքիր պատկեր է ներկայացնում քաղաքի տարածական բաժանումը

22 Տե՛ս **Ժորես Խաչատրյան,** Հին Արտաշատի տեղադրության հարցի շուրջ, «Հին Հայաստանի պատմության եւ մշակույթի հարցեր», Երեւան, 2001, էջ 42-48:

23 Տե՛ս **С.Д. Крыжицкий.** К вопросу об определении количества населения в греческом эллинистическом городе, §Материалы III Всесоюзного симпозиума по древней истории Причерноморья на тему, Эллинизм и Причерноморье», Цхалтубо, V, 1982, Тезисы докладов и сообщений, «Мецниереба», 1982, էջ 47-49:

24 Տե՛ս **Ժորես Խաչատրյան,** Արտաշատը հայոց դարձի նախօրեին եւ հետո: «Էջմիածին», 2002, Ժ, էջ 54-67:

ըստ նշանակության, պալատական վարչական, պաշտամունքային, արհեստավորա-առեւտրական եւ ռազմական-պաշտպանական եւ այլն, եւ ըստ բնակչության սոցիալական կազմի եւ իրավական վիճակի:[25] Երկրորդ բլրի վրա, որն ամենաբարձրն է (70 մ) ունի ամենամեծ օգտագործելի մակերեսը, քաղաքի միջնաբերդը: Այստեղ են տեղադրված պալատական վարչական շենքերը, ավագանու բնակարանները, զորանոցներն ու զինանոցները: Թեեւ այն բաղկացուցիչ մասն է կազմում ընդհանուր համակարգի, սակայն իր երկու հզոր քաղաքամերով (պարիսպներով) լավ պաշտպանված, անառիկ դիրք ունի: Միջնաբերդի գագաթին պահպանվել է ոչ մեծ քարերով ու կրաշաղախով ամրացված հարթակ, որի վրա կառուցված է եղել պալատական հուշարձանախումբը: Հարթակի մակերեսը 275 քմ (25x30մ) է: Այն ստեղծվել է Տրդատ Առաջինի ժամանակ: Դա Հայաստանում շինարարության մեջ կրաշաղախի կիրառության ամենահին դրսեւորումներից մեկն է: Հարթակը շուրջ 5 մ բարձր է բլրի մակերեսից եւ, ակներեւաբար առանձնացված է խուլ պատերով:

Ինչպես հայտնի է մայրաքաղաքները հանդիսանում էին նաեւ կրոնական գլխավոր կենտրոն: Պեղումներով պարզված է, որ Արտաշատի պաշտամունքային կենտրոնը վեցերորդ բլուրն էր (բարձր. 50 մ): Այս տեղում է կառուցվել Մեծ Հայքի եւ Արտաշատի հովանավոր Անահիտ դիցուհու եւ արքայի նախնիներին նվիրված տաճարը: Արտաշիսյան դինաստիայի հովանավոր Արեգ-Միհր-Ապոլոն-Հերմես-Տիրի տաճարը կառուցվել է (կանգնեցվել է) քաղաքից դուրս, ճանապարհին, Արտաշատի հյուսիսարեւմտյան մասում, Արաքսի ձախ ափին գտնվող բլուրի վրա: Այստեղով, Տափերական կամրջով էր ընթանում դեպի հարավ («արքայական ճանապարհը»), արեւմուտք եւ արեւելք ձգվող ճանապարհը:

Գրիգոր Լուսավորիչը անարգել էր մայր աստվածուհի Անահիտին: Կրոնական հանցագործ էր, ուստի նրան պետք է «բանտարկեին» Անահիտի տաճարի մոտ գտնվող բանտում: Գրիգոր Լուսավորիչը հենց Խոր Վիրապից էր դուրս գալու հաղթանակած, որը խորհրդանշելու էր նոր կրոնի հաղթարշավը հեթանոսության նկատմամբ: Հայտնի է, որ պաշտամունքային վայրերը չէին փոխվում: Ըստ Ագանթանգեղոսի, Գրիգոր Լուսավորիչը ավերված հեթանոսական տաճարների տեղում, այդ թվում նաեւ Արտաշատում, խաչեր կանգնեցրեց, որին պետք է երկրպագեին կուռքերի փոխարեն[26]: Հետագայում այդ վայրերում եկեղեցիներ կառուցեց: Խոր Վիրապը հայերի նշանավոր սրբությունն է, ուխտագնացության վայրը: Այստեղ XII-XIII դդ. եղել է բարձրագույն դպրոց, որի գործունեությանն ընթացք է տվել Վարդան Արեւելցին: Մաշտոցյան մատենադարանում է պահվում Խոր Վիրապում գրված 12 ձեռագիր:

Արեգ-Միհր-Ապոլոն-Հերմես-Տիրի տաճարում եղել է պատգամատուն, որտեղ կատարվել են գուշակություններ եւ երազահանություն[27]: Այստեղ պեղումներով բացվել է տաճարի առաջին հարթակը (Ք.ծ.ա. IIդ.): Այն կառուցված է կրաքարե վեմերով, մի շարքից բաղկացած չոր շարվածքով: Քարերն իրար հետ ամրացվել են միայն հորիզոնական,

25 Տե՛ս **Ж.Д. Хачатрян, А.В. Тоникян,** Градостроительные аспекты древнего Арташата. "Архитектурное наследство"|, 37, М., 1990, էջ 29:

26 Տե՛ս **Ագաթանգեղոս,** Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր Մկրտչյանի եւ Ա. Կանայանցի, աշխ. թարգմ. եւ ծանոթ. Ա. Տեր-Ղեւոնդյանի, Երեւան 1983, « 841:

27 Տե՛ս **Մովսէս Խորենացի,** II, 83:

ծիծեռնակապոչ հիշեցնող փորվածքների մեջ տեղադրված փայտերով: Վեմերն ունեն կոպտատաշ (ռուստիկում) մշակում, որը տարբերվում է մինչհելլենիստականից:

Հելլենիստական շրջանի տաճարը եւ հարթակը, ակներեւաբար ավերվել է 59 թ. Կորբուլոնի կողմից: Պեղումներով պարզվում է, որ Արտաշատում Տրդատ Առաջինի օրոք (63-88 թթ.) կառուցվել է նոր հարթակ, նոր տաճարով: Հարթակի մուտքը արեւելյան կողմից է: Բացվել է (երկ. 4,80 մ, լայն. 1,80 մ) վեց աստիճան, որով բարձրացել են դեպի վեր եւ աշտարակի վրայով մտել տաճարական համակառույցի բակ: Բլրի վերին մասում բացվել են առաջին հարթակի (Ք.ծ.ա. Ող.): Ապոլոն-Տիրի տաճարի հիմնապատվանդանի պատերը (արեւելյան պատի երկ. 22 մ, հարավ.՝ 31,50 մ, հյուսիս.՝ 2,80 մ, որի շարունակությունն աշտարակը կառուցելիս ավերել են): Արեւմտյան աստիճանավոր հիմնապատի (ստիլոբատի, stylobates) մի հատվածն է միայն պահպանվել[28]: Որմերը կառուցապատված են սեւ մարմարի զանգվածեղ քարերով: Որոշ հատվածներում ժայռերը ուղղահայաց հատել են պատերի երկայնքով, իսկ հարավային պատի մաս կազմող ժայռը որոշ տեղերում հարթեցվել է, որպեսզի երկրորդ շարքի քարը չսահի: Պահպանվել է հիմնապատվանդանի մի շարքը: Հարավարեւելյան անկյունից, որտեղ ժայռը ավելի ցածր է, երկու շարք է շարվել (բարձր.՝ 1,65 մ): Արեւելյան պատին՝ հիշյալ անկյունից 1,25 մ հեռավորությամբ դեպի արեւելք, պահպանվել է կոպտատաշ մշակումով եւ ծիծեռնակապոչ կապերով չորս կրաքարերից բաղկացած որմի առաջին շարքը (երկ.՝ 2,30 մ): Չորրորդ քարի ծիծեռնակապոչ կապը վկայում է, որ պատը շարունակվել է: Այդ են հավաստում նաեւ նույն ուղղության վրա գտնվող ժայռի հարթեցված երկու աստիճանները (երկ.՝ 4,55 մ) եւ դրանց շարունակությունը կազմող ժայռի մեջ փորված եւ մեջն ագուցված կրաքարե մեծ ու փոքր սալերը (երկ.՝ 1,15 մ, ընդհանուր երկ.՝ 7 մ):

Ծիծեռնակապոչ կապերով պատը պատվանդանի արեւելյան կողմում գտնվող աստիճանների եզրային պատն է: Տաճարի հրապարակը 1500 քառ. մ է: Այն ունի տաճարի կրաքարի տաշեղներից բաղկացած, լավ տոփանված մակերես: Պարզվում է, որ տաճարի քարերը մշակվել են տեղում:

Պատվանդանի հյուսիսարեւելյան պատի մոտ, հատակին գտնված Արտաշատի քաղաքային պղնձե դրամը (թվագրվում է մ.թ. 4-6թթ.) եւ վերը նշված ծիծեռնակապոչ կապերով պատը հավաստում են, որ վերջինս Արտաշես Առաջինի կառուցած տաճարն է: Բլրակի հարթեցված գագաթը, որի վրա բարձրացել է կրաքարե սյունաշար տաճարը, արեւելյան կողմում գտնվող սրբազան հրապարակից բարձր է երեք մետրով: Հիմնապատվանդանի բարձրությունը թելադրված է ռելիեֆով: Աստիճանները ակներեւաբար եղել են տասը (բարձր.՝ 30 սմ): Վերջիններս հյուսիսային կողմից եզերող պատը տակավին չի հաջողվել գտնել: Սակայն, եթե նկատի ունենանք աստիճանները հարավային կողմից եզերող պատի հեռավորությունը, ապա այն պետք է հավասար լիներ հյուսիսային կողմի պատի հեռավորությանը՝ հաշվի առնելով, որ այդ պատերը առնվազն 1-1,5 մ լայնությունից հետո պետք է ուներ նային անմիջապես աստիճաններին հարող պատ: Հետեւաբար, աստիճանների լայնությունը լինելու էր 16,5 կամ 17,5 մ:

28 Տե՛ս **Ժորես Խաչատրյան,** Նորահայտ հեթանոսական տաճար Արտաշատ մայրաքաղաքում. «Բանբեր Երեւանի համալսարանի», Հասարակական գիտություններ, Հայագիտություն, 130.1, Երեւան, 2010, էջ 29-30, աղ. I, նկ. 1-3:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո Գրիգոր Լուսավորիչը կործանեց հեթանոսական ապրվածների մեհյանները եւ իրենց կալվածքներով ու գանձերով շնորհեց եկեղեցիներին: Արտաշատի Անահիտի տաճարն ավերեցին «... եւ ամբարված գանձերը աղքատներին, տառապյալներին ու չքավորներին բաժանեցին: Դասպակերտներն ու սպասավորներին, քրմերով հանդերձ եկեղեցու պետքերին ծառայելու համար»[29]:

Մհեր-Ապոլոն-Տիրի տաճարը պետք է ունենար ոչ միայն գանձատուն, այլեւ դասպակերտներ, կալվածքներ, արոտավայրեր՝ զոհաբերվող կենդանիների համար: Վերոհիշյալ Մհեր-Ապոլոն-Տիրի գանձատունը քանդվել[30] եւ թալանվել է այդ ժամանակ:

«Գանձատան» արեւմտյան պատի պահպանված վերին շարքի մեջ, որն ավելացվել է վաղ միջնադարում, պեղումներով հայտնաբերվել են հռնիական երեք խոյակներ եւ ջարդված խոյակի տարբեր մասեր: Այդ շարքում կան նաեւ կանելյուրներով սյան գլանի գանազան հատվածներ: Խոյակների ոլորագարդերի միջանկյալ մասերը հար-դարված են երեք ձվաձեւ զարդերով, որոնք իրարից անջատված են ներքեւ ուղղված նետասլաքներով: Ձվաձեւ զարդերը եզրերում ավարտվում են երկու կամ երեք տերեւաձեւ ռելիեֆ պատկերներով: Ի դեպ, խոյակների այդ հատվածի ձեւավորումները իրարից տարբեր են: Նմանօրինակ հարդարանքով խոյակ հանդիպում է նաեւ Գառնիի տաճարի խոյակների մեջ: Վերջիններիս սյան վրա հաստատվող կողմն ունի 7-8 սմ բարձրության կամարակապ կանելյուրներ: Պարզվում է, որ դրանք նախորդ տարի Արտաշատում հայտնաբերված կանելյուրներով սյուների վրա դրվող խոյակներ են: Խոյակների վոլյուտայի մոդուլի համաձայն՝ տաճարի բարձրությունը պատվանդանի հետ միասին մինչեւ ծածկը եղել է 11 մ: Ուշագրավ է նաեւ հարթակի արեւելյան պատի հարավային մասում հայտնաբերված հռնիական խոյակի կրաքարե բեկորը: Պահպանվել է վերջինիս միջվոլյուտային տարածքի մեջ արված երեք գորելեֆ հոնիկներով հատվածը: Ինչպես հայտնի է, հռնիական օրդերով խոյակներով է օժտված Գառնիի տաճարը (Ք.հ. 77 թ.): Այդօրինակ խոյակները Վիտրուվիոսն անվանում է հռնիական՝ հիմնավորելով, որ նրանք առաջինն են օգտագործել[31]:

Տաճարին վերաբերող ամբողջական եւ բեկորային վիճակում հայտնաբերված վեմերը՝ ատրիկյան խարիսխը, կանելյուրներով սյուները, հռնիական (վոլյուտա) խոյակները, սանդղաձեւ երեք շերտերի մասնատված արխիտրավի մասերը, ֆրիզի քանդակազարդ քարը, քիվի ատամնավոր բեկորները ամբողջացնում են սյուների հորինվածքը: Այդ ամենը թելադրում է, որ տաճարն ունեցել է հռնիական օրդերի սյունակարգ:

Արտաշատի պեղումներով հայտնաբերվել են նաեւ տաճարի նառսի (ցելլա) գլխավոր սենյակի (սրբատեղի) շարի խոշոր վեմեր, հատակի անկյունային որմնասյան (անտ), ատիճանների քարեր: Տակավին դժվար է որոշել, թե ինչ չափեր է ունեցել ցելլան: Հայտնաբերվածն ակներեւաբար 22x31,5 մ չափերի բարձր (3 մ) հիմնապատվանդանի վրա տեղադրված հունահռոմեական պերիպտեր է: Տաճար են բարձրացել արեւելյան կողմի լայն ատիճաններով: Տաճարի հրապարակից հայտնաբերված կղմինդրների

29 **Ագաթանգեղոս,** « 781:
30 Տես անդ, « 809:
31 Տես **Витрувий.** IV, I, 7:

(սոլենների եւ կալիպտերների) բեկորները թույլ են տալիս ենթադրելու, որ տաճարն ունեցել է երկթեք տանիք: Ինչպիսին են եղել նառոսի եւ արտաքին սյունասրահների առաստաղները՝ կավանդեն առաջիկա պեղումները:

Գառնիի տաճարի ավերակները հայտնի էին, եւ այն համարվում էր այդօրինակ միակ կառույցը Հայաստանում՝ «որպես պատահական ճարտարապետական հուշարձան»: Արտաշատի պեղումներով հայտնաբերված տաճարի ավերակները հավաստում են, որ առկա է գեղեցիկ կառուցված սպիտակավուն քարից երկրորդ շքեղ տաճարը, որը հայ հնագիտության՝ XXI դարասկզբի ամենախոշոր գյուտերից է: Այն հնարավորություն է ընձեռում նորովի դիտարկել Արտաշատ մայրաքաղաքի, Հայաստանի հելլենիստական շրջանի պատմությունն ու մշակույթը:

Արտաշատում եղել են նաեւ այլ տաճարներ: Մի տաճար բացվել է Խոր Վիրապի ճանապարհի հարավային կողմում: Հայտնաբերվել են շենքի կրաշաղախից ձուլած ակրոտերիայի, ականթի տերեւների բեկորներ, ներքին հարդարանքի տարբեր գույների որմնանկարների, քիվերի բեկորներ, մեծ քանակությամբ կղմինդրների մասեր:

Միհր-Ապոլոն-Տիրի տաճարի համակառույցի հելլենիստական հարթակի (Ք.ծ.ա. IIդ.) պատի արեւելյան կողմում բացվել է ուղղանկյուն՝ արեւելք-արեւմուտք երկշար դասավորված ութ մույթերով եռանավ սյունազարդ սրահ (երկ.՝ 20,00 մ, լայն. 12,50 մ): Սյունազարդ սրահներ հայտնի էին տակավին ուրարտական շրջանից (Ք.ծ.ա. VIII դ.) եւ հարատեւել են նաեւ հետագայում: Դրանք եղել են աշխարհիկ կառույցներ, մտել են պալատական համակառույցների մեջ եւ ծառայել հանդիսավոր ընդունելությունների, ճաշկերույթների համար:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո, հանդիսավոր հասարակական միջոցառումների համար, աշխարհիկ ճարտարապետական ձեւերի մեջ այն ճանաչվեց ամենաընդունելի կառույցը: Սյունազարդ սրահներն իրենց հատակագծով V դ. դառնում են քրիստոնեական տաճարի տիրապետող ձեւ: Քրիստոնեությունը պետական կրոն հռչակած երկրներում (Բյուզանդիա, Սիրիա եւ այլն), այդ թվում նաեւ Հայաստանում, զարգանում էր հիմնվելով տեղական ավանդույթների վրա, ձեռք բերելով յուրահատուկ ինքնատիպ բնույթ, սակայն, մշակութային, կրոնական, հաճախ նաեւ քաղաքական ընդհանրությունները հանգեցնում էին գեղարվեստական դպրոցների հորինվածքային եւ դեկորատիվ ձեւերի փոխներթափանցման:

Քաղաքամայր Արտաշատի կառուցվածքի կարեւորագույն տարրերից մեկը պաշտպանական համակարգն է: Ըստ Ստրաբոնի եւ Կորնելիոս Տակիտոսի Արտաշատն ունեցել է հզոր քաղաքորմ, (պարիսպներ), որի երկարությունը 10.000 մետրից ավելի է: Քաղաքի բոլոր տասներկու բլուրները մտնում են պաշտպանական ընդհանուր համակարգի մեջ: Բլուրներն իրար կապող նեղ անցումները դարպասներով անջատելու շնորհիվ վերածվել են առանձին պաշտպանական միավորների: Քաղաքի բլուրների անջատումը առանձին հզոր պարիսպներով, նպատակ է ունեցել խափանել թշնամու ազատ տեղափոխումները եւ ստիպել ծանր մարտեր մղել ամեն մի թաղամասի համար[32]:

32 **Ժ. Դ. Խաչատրյան,** Հայաստանի անտիկ շրջանի պաշտպանական կառույցները, ՊԲՀ, 1987, թ. 4 էջ 167-168, նկ. 1:

Միջնաբերդի ուրարտական պարիսպը վերականգնվել, հարմարեցվել է հելլենիստական ժամանակների ռազմարվեստի պահանջներին: Անկյունային որմահեցերը (կոնտրֆորս) փոխարինվել են կլոր աշտարակներով (տրբ. 13-15 մ), իսկ մուտքն իջեցվել է դեպի առաջին բլուր տանող լանջը եւ թեւերից պաշտպանվել երկու հզոր աշտարակներով (տրբ. 13 մ): Տարբեր լուծումներ ունեն մուտքերը: Միշտ պաշտպանվել են երկու աշտարակներով եւ կառուցապատվել այնպես, որ դեպի դարպասները տանող ճանապարհներն անցնեն պարիսպների կողքով: Քաղաքի վեցերորդ եւ յոթերորդ բլուրները, որոնք համեմատաբար բարձր էին եւ լավ ամրացված, միջնաբերդի հետ միասին կազմում էին պաշտպանական համակարգի առանցքը:

Արտաշատի կառուցման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվել տեղանքին: Ամեն բլուր ունի իր լանդշաֆտին համապատասխան հատակագիծ եւ կառուցվել է նախապես մտածված, ընդհանուր միասնական հատակագծով, ուր հաշվի են առնված քաղաքաշինության հետ առընչվող բոլոր սկզբունքները: Պեղումները հավաստում են, որ Արտաշատի բնակարանների առանցքը, անկախ նրա տեղադրությունից կազմում է ընդհանուր սենյակը, որի շուրջ համախմբված են մյուս սենյակները[33]: Այն բնորոշ է բոլոր շինարարական շրջափուլերին: Տան նման կառուցվածքը Հայկական լեռնաշխարհում շատ հին ակունքներ ունի, հանդիպում է նաեւ Փոքր Ասիայում եւ Միջագետքում: Այն վերջնականապես ձեւավորվում է ուրարտական շրջանում[34], եւ ինչպես Արտաշատի պեղումներն են ցույց տալիս, շարունակվում է հելլենիստական եւ ուշ անտիկ շրջանում եւ իր հետագա զարգացումն է ստանում վաղ միջնադարյան պալատական կառույցներում (Դվին, Արուճ):

Արտաշատ քաղաքամայրն ունեցել է կոմունալ տնտեսության լայն ցանց: Կավե լայն խողովակներով (55x45 սմ) քաղաքը խմելու ջուր է ստացել լեռներից: Ջրամատակարարման այդ համակարգը բացվել է քաղաքատեղիին հարող Փոքր Վեդի գյուղի դաշտերում (1987 թ.), ստեղծվել է Ք.ծ.հ. I դարում, Տրդատ Առաջինի կողմից քաղաքը կառուցելու ժամանակ: Ջրի առատությունը հնարավորություն է տվել կյանքի կոչելու բաղնիքների լայն ցանց: Միայն VIII բլրի վրա առկա են մի քանի բաղնիքներ:

Հայաստանում ծանոթ էին հունահռոմեական աշխարհում լայն տարածում ունեցող նոր տիպի կառույցներից մեկին եւս, բաղնիքների շինարարական սկզբունքներին: Կառուցել են ոչ միայն փոքր չափերի անհատական բաղնիքներ, այլեւ խոշոր հասարակական թերմաներ: Հավանաբար, իբրեւ մայրաքաղաք, առաջին բաղնիքները կառուցվել են Արտաշատում, Ք.ծ.հ. IIդ., սկզբին: Քաղաքի տաճարի հարթակ տանող աստիճաններից 2 մ հարավ, արեւելյան հենապատին կից բացված հասարակական բաղնիքը (թերման) բաղկացած է տասը սենյակից[35]: Վերջիններս տարբեր չափերի են: Ամենամեծը առաջին սենյակն է (75 քառ. մ), որը խոշոր ունի եւ գլխավոր ճակատն ուղղված է դեպի արեւելք: Ամենափոքրը արեւմտյան կողմի սենյակն է, որը եղել է շոգեբաղնիք (16,5 քառ. մ): Յուրաքանչյուր սենյակ

33 Տե՛ս **Ա.Վ. Տոնիկյան,** Արտաշատի ուշ հելլենիստական դարաշրջանի բնակելի տների ճարտարապետությունը, ԼՀԳ, 1987, թ. 9, էջ 68, 73:

34 Տե՛ս **Կ.Կ. Ղաֆադարյան,** Արգիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը, Երեւան, 1984, էջ 125-127:

35 Տե՛ս **Ժորես Խաչատրյան,** Արտաշատի «Երազամոյն» վայրի տաճարը եւ կից համալիրները, ՊԲՀ, 2009, թ.1, էջ 122-134:

ունեցել է քառակուսի թրծած աղյուսներով կառուցվապատված, կիսակլոր կամարով կրակարան: Շինությունը ճեղքված որձաքարն է, թրծած աղյուսը, որոշ պատերի մեջ կան կրաշաղախով շարված գետաքարեր: Սենյակների անկյունները եւ դռների բացվածքների երիզները շարված են լավ մշակված եւ հղկված կրաքարե խոշոր զանգվածներով: Բոլոր սենյակներն ունեն կրկնակի հատակ, այսինքն տաքացվել են. ջեռուցումն իրականացվել է, այսպես կոչված, հիպոկաուստի (hipocaustum) սյուների վրա կառուցված կրկնակի հատակի եւ պատերի միջոցով: Չորս անկյունում կոնաձեւ ելուստներ ունեցող (6-10 սմ) քառանկյուն աղյուսները ծայրերով ամրացվել են պատերին եւ ծածկվել սվաղով: Այս եղանակով ստացել են դատարկ տարածություն: Կրակարանի տաք ծուխը պատերի ներքնամասում թողնված կամարակապ բացվածքների միջով թափանցել է հատակի եւ պատերի միջեւ եղած դատարկ տարածություն եւ ջեռուցել տարածքը: Քառակուսի, կոնաձեւ եւ ուղիղ ելուստներով աղյուսները նույն նպատակով օգտագործվել են հռոմեական բաղնիքներում: Այդ ձեւով տաքացվող սենյակների օդն ավելի դյուրահաճ էր, առողջարար:

Սենյակների ստորին հատակը պատրաստել են անջրաթափանց, բետոնե կարծր շաղախով: Այսինքն՝ դրանով այն տարբերվում է Հայաստանի մեզ հայտնի բաղնիքների ստորին հատակներից, որոնք տոփանված կավից էին:

Ստորին եւ վերին հատակի բարձրությունը 1 մ է: Եւ ստորին, եւ վերին հատակի մակերեսը բաց վարդագույն է: Հենապատերը կավե թրծած քառակուսի, սկավառակաձեւ աղյուսներից են, ինչպես նաեւ գլանաձեւ խողովակներից:

Բոլոր սենյակներն ունեցել են խճանկար հատակներ: Այդ են վկայում պեղված հատակների խճանկարով բեկորները եւ մնծաքանակ հատիկները: II, IV, VII սենյակների խճանկարները երկգույն են: Ընդհանուր ֆոնը սպիտակն է, վերցված մուգ կապույտ սմալտայով պատած հատիկներից կազմված ուղղանկյուն շրջանակի մեջ (ժապավենի լայն. 8 սմ): V սենյակի հյուսիսարեւելյան դռան սեմին (լայն. 60 սմ): IVդ. վերաբերող շարվածքը պեղումներով հեռացնելուց հետո բացվեց II դ. վերջի III դ. առաջին քառորդին պատկանող մուտքը, որն ավելի լայն է (1,05 սմ): Դահպանվել է նախորդ շերտի հախճապակը՝ խճանկարը: Այն նույնպես պատրաստված է ֆիլգիտից, բաց ուղղանկյուն սեւ շրջանակի մեջ (լայն. 57 սմ) սպիտակ ֆոնի վրա սեւ ժապավենով շեղանկյուն է հորինված, որի կենտրոնում՝ սեւով, ավելի փոքր շեղանկյուն է, սուր եզրերի կողքերին սեւով ուղղանկյուն եռանկյունիներ:

Առավել ուշագրավը VIII սենյակի հարավային կեսում ներճկված վիճակում պահպանված վերին հատակի խճանկարն է, որը թույլ է տալիս վերականգնել հախճապակի՝ խճանկարի հորինվածքի ընդհանուր պատկերը: Նրա թեման, զարդամոտիվների վերակազմությունը, երկրաչափական եւ այլ տիպի պատկերները, իրենց բաղադրիչ մասերով հիշեցնում են գորգային հարուստ զարդերը: Բազմագույն գեղեցիկ պատկերը համաչափ դասավորված մանրամասներով շքեղ տպավորություն են ստեղծում: Սպիտակ, համեմատաբար խոշոր հատիկներով շարված եզրային հատվածին հաջորդում է լայն, ուղղանկյուն մուգ կապույտով արված շրջանակ՝ շեղանկյուն եւ ուղղանկյուն երկրաչափական զարդերով: Դրան հաջորդում են քառակուսի, ոճավորված պարանահյուսով շրջանակի մեջ վերցված իրար հետ միահյուսված վեց շրջանները որոնց կենտրոնը գտնվում է մեծ շրջանի շառավղի կենտրոնում: Բոլոր օղակներն ունեն իրենց երիզազարդերը: Վերջիններս առանձնանալով

օղակից, եւ վերին մասում հյուսվելով վերածվում են ութանման հյուսված երեք զարդի: Երիզազարդի ներքեւում օղակներն ունեն երեք տեսակի ժապավենաձեւ, ալիքաձեւ զարդաշար, որը խորհրդանշում է ծովի հանդարտ վիճակը, եւ ոլորուն ծայրով զարդեր, որն ալեկոծվող ծով է իմաստավորում: Հետաքրքիր են քառակուսու անկյուններում պատկերված երկսայրի սակրերն իրենց կոթառով: Ի դեպ երկբերան սակրի մասին հիշատակություն ունի Մովսես Խորենացին (Մ. Խ., III, 28) կապված պաշարված Տրգրանակերտի (359 թ.) պարիսպների հիմքերը քանդելու հետ: Խճանկարի հորինվածքը աչքի է զարնում իր բազմազանությամբ, կառուցվածքով, զարդամոտիվների հարստությամբ[36]:

IX սենյակի վերին հատակը չի պահպանվել: Գտնվել են վերին հատակի տարբեր մեծության մասեր, զանազան դիրքերով ընկած հաճախ բազմագույն կամ սպիտակ խճանկարով:

Ուշադրության արժանի է այս սենյակի խճանկարը, որը նույնպես բազմագույն է: Այն թեեւ մեզ է հասել բեկորային վիճակում, սակայն ունեցել է շատ հարուստ հորինվածք: Եզրային մասը պատրաստված է եղել ֆիլզիտի սպիտակ, համեմատաբար խոշոր հատիկներով: Դատկերներն արված են կանաչ, վարդագույն, սպիտակ, սեւ, դեղնավուն սմալտայով: Այստեղ, ըստ պատկերի մասերի, օգտագործվել են տարբեր ձեւերի ու չափերի հատիկներ, հաճախ այնքան մանր, որ կարելի է շարել միայն փոքր ունելիով: Ի տարբերություն VIII սենյակի խճանկարի, այստեղ գտնվել է մարդու դեմք պատկերող մի հատված՝ աջ աչքով, ճակատի մի մասով եւ վարսերով, քթով ու բերանով: Հայտնաբերվել են նաեւ սեւով դրոշմված լատիներեն արձանագրության երեք տառ (VER), որը լատիներեն նշանակում է գարուն, մեանդրի տարբեր ձեւեր, ծաղիկներ եւ այլ զարդամոտիվներ: Ի դեպ, Արտաշատում մեանդրն իր կիրառությունն է գտել նաեւ բնակարանների ինտերիերների որմնանկարներում (VIII բլուր): VIII եւ IX սենյակների խճանկարները հասարակական բաղնիքի սկզբնական շրջանի հորինվածքներից են եւ կարող են թվագրվել II դ. վերջով եւ III դ. սկզբով[37]: Դրանք Հայաստանում հայտնաբերված երկրորդ խճանկարն են, բայց մակերեսով շատ ավելի մեծ ու ավելի հին, քան Գառնիի խճանկարը: Ընդ որում երկուսն էլ պատկանում են Անտիոքյան դպրոցին: Հայտնի է, որ եղել են խճանկար պատրաստող շրջիկ վարպետներ: V սենյակի սեմի շեղանկյունաձեւ զարդերով խճանկարը նույնպես պատկանում է բաղնիքի առաջին շերտին՝ III դ. սկզբին, իսկ մյուս խճանկարները, որոնք նույն ոճի են, վերաբերում են IV դ. սկզբին:

Բաղնիքն ունի ջրամատակարարման դասական կատարյալ համակարգ: Ջուրն ստացել է Արաքսից եւ տարբեր տրամաչափի կավե խողովակներով բաշխվել սենյակներին: Այդ նպատակով օգտագործվել է երկուսից չորս գլանաձեւ անցքով ուղղանկյուն, լավ մշակված կրաքար, որոնց մեջ առ այսօր պահպանվել են խողովակների մասերը: Այս ամենը խոսում են քաղաքաշինության, կոմունալ տնտեսության, բնակչության կենցաղային մակարդակի զարգացման բարձր աստիճանի մասին:

---

36 Տես **Жорес Хачатрян, Амина Канецян**. Новонайденные мозаики из общественной бани древней столицы Армении Арташат. в сб. "Культурно-исторические разыскания". Тбилиси. 2010. էջ 177-182, և նկ. 3-6:

37 Տես անդ, էջ 180, նկ. 7-9.

Ինչպես հայտնի է, հինավուրց քաղաքները հանդիսացել են գյուղատնտեսական մթերքների արտադրության խոշոր կենտրոններ: Նրանք ունեին իրենց գյուղատնտեսական գոտիները, որոնք կոչվում էին տվյալ քաղաքի անունով[38]: Դրանք պատկանում էին թագավորին, քաղաքային համայնքին եւ ընչեղ քաղաքացիներին[39]: Արտաշատի գյուղատնտեսական գոտին զբաղեցրել է շուրջ 3000 հա տարածք:

Հայտնաբերվել են երկրագործական զանազան գործիքներ, երկաթե բրիչներ, մանգաղներ, կեռ, սուր ծայրով դանակներ եւ այլն: Գտնվել են նաեւ ածխացած վիճակում փափուկ ցորենի, գարու, կորեկի, փշատի, քունջութի (?), բոլոր տեսակի բանջարեղենների յուղատու կաղամբի մնացորդներ[40]: Առատ են երկրագործական մթերքների վերամշակման հետ կապված գտածոները:

Հայտնի է, որ խաղողագործությունը եւ գինեգործությունը Ուրարտուի տնտեսության առաջատար ճյուղերից էին: Անտիկ շրջանում դրանք նույնպես բարձր զարգացման էին հասել: Այդ են վկայում ինչպես գրավոր աղբյուրները, այնպես էլ հնագիտական գտածոները: Արտաշատում գտնվել է բազալտե խարիսխ, որի վրա խաղող են ճզմել: Կենդանական ոսկորների առատությունը, ոչխար խուզելու մետաղե մեծ մկրատները, տաշտերը, կովկիթները, կաթնամանները, ծորակավոր անոթները, ձձումները վկայում են Արտաշատում երկրագործության հետ միասին, տնտեսության մեջ անասնապահության մեծ դերի մասին: Կարեւոր տեղ է գրավել ձիաբուծությունը: Ստրաբոնը Հայաստանն անվանում է ձիերով բացառիկ առատ երկիր եւ նշում, որ այստեղ մարգագետիններից մեկը հայտնի է «ձիառատ» անվանումով[41]:

Արտաշատում ձկնորսության տարածված լինելու մասին են վկայում պեղումներով գտնված պղնձե կարթը, կախիկ ծանրոցները, ձկների կմախքները, ձուկ մատուցելու բազմաթիվ ու բազմազան ափսեներ:

Պեղումները վկայում են, որ Արտաշատը եղել է արհեստագործական խոշոր կենտրոն: Հայտնաբերվել են ամենատարբեր արհեստանոցներ, գործիքներ կամ արհեստագործական արտադրանք, մետաղաձուլական եւ դարբին-զինագործի արհեստանոցներ, կահույքի ձեւավոր ոտքեր եւ տարբեր տիպի զարդեր ձուլելու կաղապարներ, բրոնզե ոսկերչական մուրճ, քարե, մետաղե եւ այլ նյութերից կիսաֆաբրիկատներ եւ այլն: Պեղումներով Արտաշատում հայտնաբերվել է խեցեղեն թրծելու շրջանաձեւ, երկհարկանի հնոց, որն ավերվել է կավե խողովակներ թրծելու միջոցին: Աղբյուրները հիշատակում են շուրջ 50 արհեստների մասին[42]:

Զարգացած էին մետաղագործական արհեստները. դարբնությունը, զինագործությունը, պղնձագործությունը, գեղարվեստական մետաղագործությունը, ոսկերչությունը, արծաթագործությունը, նաեւ ակնագործությունը, որը կապված էր վերոհիշյալ արհեստների հետ: Հելլենիստական դարաշրջանում ոսկերիչները կիրառել են տեխնիկայի բոլոր ձեւերը, հնարները: Հաճախ համատեղվել են տեխնիկական տարբեր եղանակներ:

---

38 Տես «**Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին**», Երեւան, 1957, էջ 68, 79:

39 Տես **ՀԺՊ,** հ. I, էջ 660:

40 Որոշել է հնաբուսաբան Ռոման Հովսեփյանը:

41 Տես **Strabo,** XI, XII, 7:

42 Տես **С.Т. Еремян,** Развитие городов и городской жизни в древней Армении, “Вестник древней истории”,1953, թ. 3, էջ 27-31:

Նկ. 13 Հասարակական բաղնիքի եւ գիմնասիոն հիպոկաուստի սյուները

Նկ. 14 «Գանձարանի» վաղ միջնադարյան պատի մեջ բացված հոնիական խոյակի եւ սյուների բեկորներ



Նկ. 15 Տաճարի հոնիական խոյակը կանելյուրներով սյան վրա

Նկ. 16 Միհր-Ապոլոն-Տիրի տաճարի արեւելյան ճակատի վերակազմությունը

Նկ. 17 Միհրին պատկերող հեծյալի կավե արձանիկ (Ք. ծ. հ. I-III դդ.)



Նկ. 18 Արտաշատից հայտնաբերված զենքեր

Նկ. 19 Աֆրոդիտե-Աստղիկի մարմարե արձանը, գլուխը եւ թեւերը թերի են
(Ք. ծ. ա. II դարի վերջ-I դարի սկիզբ)

Նկ. 20 Արարատ լեռը Արտաշատից

Արտաշատում հայտնաբերված նյութերից ամենագանգվածայինը խեցեղենն է: Հելլենիստական խեցեղենը ձեւավորվել է տեղական ավանդույթների հիման վրա: Հելլենիստական գունագարդ խեցեղենի ազդեցության շնորհիվ վերստին աշխուժացան տեղական ավանդույթները:

Արտաշատում հայտնաբերվել է մեծ թվով ջնարակած խեցեղեն[43], որի արտադրությունը ծայր է առնում Ք.ծ.ա. II դարում եւ լայն տարածում է ստանում Ք.ծ.ա. I-Ք.ծ.հ. II դդ: Արտաշատն անտիկ շրջանի ջնարակած խեցեղենի արտադրության խոշոր կենտրոններից մեկն էր:

Արտաշատի պեղումների շնորհիվ միայն հնարավոր դարձավ հանգամանորեն խոսել անտիկ Հայաստանում ապակու արտադրության մասին: Արտաշատից հայտնաբերված Ք.ծ.ա. II-Ք.ծ.հ. IV դդ. մեծաքանակ կենցաղային ապակին, ապակյա սրվակ պատրաստելու կաղապարը, ապակու ձուլվածքը եւ այլն, ցույց են տալիս, որ Ք.ծ.ա. II-I դարերում Արտաշատում արտադրվում էին ապակյա անոթներ: Ք.ծ.հ. I-II դարե ղում Հայաստանը դարձել էր անտիկ աշխարհի ապակեգործության կենտրոններից մեկը, իսկ Արտաշատը Հայաստանի ապակու արտադրության հիմնական կենտրոն էր[44]:

Արտաշատում զարգացած է եղել ոսկրի մշակումը, մանածագործությունը, ներկարարությունը, կոշկակարությունը, կաշեգործությունը, կողովագործությունը, դերձկությունը եւ այլն:

Հելլենիստական շրջանում արագորեն աճում է առեւտրական գործարքների ծավալը: Արտաշատով էին անցնում միջազգային առեւտրական ճանապարհները[45] որի հյուսիսային մայրուղու վրա էր կառուցված մայրաքաղաք Արտաշատը (Էկբատանա-Գանձակ-Արտաշատ-Սեբաստոպոլիս): Հայաստանի դերը կարեւորվում է միջազգային առեւտրում, Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ Ք.ծ.ա. I դ., երբ Տիգրան Մեծը Առաջավոր Ասիայի կարեւորագույն առեւտրական ճանապարհների վրա հսկողություն է սահմանում: Առեւտրի եւ արվեստների զարգացման, ինչպես նաեւ Հայաստանում հելլենիստական մշակույթի տարածման համար, Մեծն Տիրանի կողմից հելլենիստական 12 քաղաքներից Հայաստան գաղթեցված շուրջ կես միլիոն բնակչության մի մասը առեւտրականներ ու արհեստավորներ էին, վերջիններս բնակեցվեցին խոշոր քաղաքներում[46]: Արտաշատի դերն ավելի մեծացավ, իբրեւ միջանցիկ առեւտրի կենտրոնի, որտեղ մաքսատուն կար[47]:

Հետաքրքիր են պեղումներով հայտնաբերված Արտաշատի քաղաքային դրամները, որոնց Ա երեսին պատկերված է Անահիտ-Տիխեն, աշտարակաձեւ թագով, Բ երեսին՝ դեպի ձախ ընթացող հաղթանակի դիցուհին (Նիկա-Վիկտորիան), աջ ձեռքին բռնած

43 Տե՛ս **Ժորես Խաչատրյան,** Քաղաքամայր Արտաշատը պատմահնագիտական հետազոտությունների լույսի ներքո, ՊԲՀ, 2007,թ. 2, էջ 25:

44 Տե՛ս **Ж.Д. Хачатрян,** Стеклоделие в древней Армении (II-I века до н.э.). ИФЖ, 1975, թ. 1,էջ 248-258. **Ж.Д. Хачатрян**, Армения и Сирия-центры стеклоделия (производственные общности), ԼՀԳ, 1983, թ. 7, էջ 59-66:

45 Տե՛ս **Я. Манандян,** О торговле и городах Армении связи с мировой торговлей древних времен (V в. до н. эры). Ереван, 1954, 49, **С.Т. Еремян**, Армения, армянское купечество и развитие торговли между Европой и Азией до XIX в., М., 1970. ՀԺՊ, I, էջ 807-822:

46 Տե՛ս **Strabo,** XI, XIV, 15.

47Տե՛ս **Я. Манандян,** նշվ. աշխ., էջ 103, 108:

առաջ պարզած դափնեպսակը, ձախում՝ արմավենու ճյուղ, «Արտաշատ մայրաքաղաքի» հունարեն արձանագրությամբ: Արտաշատի եւ Հայաստանի միջազգային կապերի ուսումնասիրության համար գիտական բացառիկ արժեք ունեն, տեղեկատվությամբ աչքի են ընկնում կավե կնքադրոշմների արխիվները, որոնք հայտնաբերվել են հինգերորդ եւ ութերորդ բլուրների վրա եւ պատկանում են Ք.ծ.ա. 180-ական թվականներից մինչեւ Ք.ծ.հ. 59 թ.[48]: Մայրաքաղաքի ավերակներից հայտնաբերված կնքադրոշմների թիվը ութ հազարից ավելի է: Վեց հազարը ամբողջական են կամ որոշվում է բեկորի վրայի պատկերը: Արտաշատի բուլլաների գյուտը հելլենիստական աշխարհում հայտնի հարուստ հավաքածուներից մեկն է: Այն յուրահատուկ է նրանով, որ Արտաշատի V բլրի արխիվում Արեւելյան եւ Արեւմտյան կերպարներն ու պատկերները հանդես են գալիս միասին:

Արտաշատի արխիվները ցույց են տալիս գրասենյակային ավանդույթների ժառանգականությունն ու անընդհատությունը: Արխիվները կարեւոր աղբյուր են Առաջավոր Ասիայի պատմության, հայ-հռոմեական հարաբերությունների մութ ու վիճելի հարցերի եւ, հատկապես, Անտոնիոսի եւ Օկտավիանոսի հակամարտությանը զոհ դարձած Հայաստանի ու նրա Արտավազդ արքայի քաղաքականությունը ճշմարտացի մեկնաբանելու համար:

Արտաշատի առեւտրական կապերի մասին են վկայում տարբեր երկրներից ու կենտրոններից՝ Հռոդոսից (Ք.ծ.ա. II-I դդ.), Կոսից եւ այլ վայրերից ներմուծված ամֆորաները, որոնցով բերվել են ձիթապտղի յուղ, գինիներ[49], «պերգամոնյան» կարմիր լաքապատ խեցեղենի գրեթե բոլոր տեսակները, Սիրիայից, Պաղեստինից, Կիլիկիայից, «Պերգամոնից», Սամոսից, Կոսից եւ այլ վայրերից՝ բալզամարիներն ու ամֆորիսկները, որոնց մեջ պահում էին քսայուղեր[50] եւ այլն:

Ուշագրավ են պեղումներով գտնված ալեբաստրե սրվակները, որոնք ներմուծվել են Միջագետքից (Ք.ծ.ա. Ի դ.) եւ Բաղդադի (Ամերիկա) լազուրիտից պատրաստված շքեղ ափսեները: Ենթադրվում է, որ այն նույնպես պատրաստված է Միջագետքում[51]: Դրանցից մեկի վրա առկա է արամեերեն արձանագրություն, որը թերի լինելու պատճառով ընթեռնելի չէ: Ձեւավոր պսակի վրա ութ եւ հատակի ռելիեֆ շրջանի մեջ երեք շաղափված անցքերում առկա են ոսկե գամեր: Լազուրիտը մշտապես բարձր է գնահատվել հին աշխարհում: Այն արեւելքի ամենահեռաքրքիր քարերից է: Լազուրիտը արտահանվել է եւ՝ իբրեւ հումք եւ՝ մշակված ձեւով: Գոյություն է ունեցել «Լազուրիտի մեծ ճանապարհ», ինչպես Չինական

48 Տես **Z'ores D. Khachatrian,** The archives of sealings , p. 365-370, pl. 73-76; Les bulles á empreintes sceaux d' Artachat, Arménie, Tresors de l'Arménie ancienne des origines au IVe siecle, Dobrée, 1996, էջ 222-226, **Z'ores D. Khachatrian,** Artaxata, էջ 135-137, Fig. 66:

49 Տես **Ժորես Խաչատրյան,** Արտաշատ, II, Անտիկ դամբարանադաշտեր, 1971-1977 թթ. պեղումները, Երեւան, 1981, էջ 111, **Жорес Хачатрян, Олег Неверов.** Архивы столицы древней Армении Арташата. Ереван, 2008, էջ 5-378. **Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան,** Արտաշատի VIII բլրի շերտագրությունը, ԼՀԳ, 1974, թ. 9, նշվ. աշխ., էջ 82-83. **Ժ.Դ. Խաչատրյան,** Արտաշատի պեղումները, ՀՍՍՀ-ում 1983-1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, 1985, էջ 32-33. **Մ.Օ. Зардарян,** Амфоры из раскопок Арташата, ՊԲՀ, 1974, թ. 1, էջ 266-272:

50 Տես **Մ. Օ. Зардарян,** Автореферат канд.дисс., էջ 6-8: Արտաշատ, II, էջ 111-116. **Ժ. Դ. Խաչատրյան,** Արտաշատի պեղումները, ՀՍՍՀ-ում 1985-1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, Երեւան, 1987, էջ 42:

51 Տես **Մ. Օ. Зардарян,** Автореферат канд.дисс., էջ 8-9:

մեսրոպի մեծ ճանապարհը[52]: Լազուրիտի ճանապարհն ընթացել է նաեւ Հայաստանով[53]: Հավանաբար դրան է վերաբերում Սդրաբոնի[54] վկայությունը, առրսների եւ սիրակների քարավանային առեւտրով զբաղվելու մասին, որ նրանք հայերից ու մեդացիներից ստանում էին հնդկական եւ բաբելական ապրանքներ: Ենթադրվում է, որ դա է լազուրիտը «հայկական քար» անվանելու պատճառը[55]:

Եգիպտոսի հետ Արտաշատի քաղաքական ու առեւտրական կապերի մասին են վկայում ոչ միայն կնքադրոշմները, այլեւ Անտոնիոսի ու Կլեոպատրա VII-ի դստեր՝ Կլեոպատրա Սելենեի գիպսից ձուլված դիմաքանդակը (Ք.ծ.ա. I դ. վերջին քառորդ), Արսինոյա II-ի (Ք.ծ.ա. 315-270 թթ.) պատկերով ապակե կնիքը, որը գտնվել է Արտաշատի Ք.ծ.հ. I դ. շերտից:

Ներմուծված նյութերի մեջ զգալի թիվ են կազմում ոսկե, արծաթե եւ պղնձե իրերն ու զարդերը: Արտաշատի ծաղկումն ու ընչավետ դառնալը, Ք.ծ.ա. I դ. եւ հատկապես I-II դդ. առաջին հերթին պայմանավորված էր տարանցիկ առեւտրով եւ այդ ապրանքների պահեստավորման վայր լինելու հանգամանքով[56]: Տվյալ դեպքում գանձվում էր կրկնակի մաքս՝ ներմուծման եւ արտահանման համար[57]: Անտիկ աշխարհի հարուստ քաղաքների մեծ մասը ապրում էին տարանցիկ առեւտրով[58]: Բյուզանդական կայսր Հուստինիանոս I-ի (527-565) կոդեքսում, արտացոլված 408/9 թվականի կայսերական Էդիկտում Պարսկաստանի հետ սահմանամերձ երեք քաղաքներում՝ Արտաշատում, Մծբինում, Կալինիկումում միջազգային ապրանքափոխանակություն կատարելու համաձայնագրի մասին էր, որը պետք է կնքված լիներ դեռեւս 166 թ. Հռոմեական եւ պարթեւական պետության միջեւ: Արտաշատը արտաքին առեւտրին մասնակցել է իր արհեստագործական եւ գյուղատնտեսական հարուստ արտադրանքով: Զարգացած էր նաեւ ներքին առեւտուրը: Հելլենիստական եւ ուշ անտիկ շրջանում Արտաշատը Հայաստանի ամենահռչակ տնտեսական ու առեւտրական կենտրոնն էր:

Տնտեսական կապերը նպաստում էին նաեւ փոխներթափանցմանը արվեստի ոլորտում:

Արտավազդ Երկրորդը, Միհրդատ Եւպատորի, Յուբա Երկրորդ Մավրիտանացու, Արքելայոս Կապադովկիացու նման, իր ժամանակի ամենազարգացած արքաներից մեկն էր, գրում էր ողբերգություններ., ճառեր եւ պատմական երկեր (Plut, Crass, 33) Սոհեմոս թագավորի ժամանակ (164-186 թթ.) Արտաշատում էր ապրում գրող Յամբլիքոսը "Babylaniaka" (Բաբելոնականք) վեպի հեղինակը: Պարզ է, որ հելլենիստական մշակույթը

52 **Վ. Ի. Սարիանիդի,** О великом лазуритовом пути на древнем Востоке, §Краткие сообщения Института Археологии|, Г. 114, 1968, էջ 3-9. գրականությունը տե՛ս նույն տեղում:

53 Տես. **Ա. Ե. Ֆերսման,** Рассказы о самоцветах, Москва, 1974, էջ 100-108:

54 Տես **Strabo,** XI, V, 8:

55 Տես **Ա. Ե. Ֆերսման,** անդ , էջ 101: **Կ.Պ. Պատկանյան,** Драгоценные камни. Их названия и свойства по понятиям армян в XVII в., Ереван, 1979, էջ 44-45:

56 Տես **Յ. Մանդալյան,** О торговле и городах Армении, էջ 49, 95:

57 Տես **Strabo,** XVII, I, 13:

58 Տես **Վ. Տարն,** Эллинистическая цивилизация, М., 1949, էջ 227-228:

եւ օտար բարքերը Հայաստան էին թափանցում առաջին հերթին մայրաքաղաքի միջոցով: Հռոմի բարքերը «Արտաքսատա» տանելու մասին է վկայում Յուվենալը (II 170):

Հելլենիստական ավանդները թափանցում են նույնիսկ այնպիսի պահպանողական ոլորտներ, ինչպիսիք են թաղման ծեսերն ու կրոնը:

Արտաշատում հայտնաբերվել են բարձրարվեստ մի շարք ստեղծագործություններ: Ուշագրավ է Աֆրոդիտե-Աստղիկի մարմարե արձանը[59] (որի գլուխը, աջ թեւը եւ ձախն արմունկից չի պահպանվել), թվագրվում է Ք.ծ.ա. II դ. - I դարի առաջին կեսով: Արձանը ներմուծված է Փոքր Ասիայի արեւմտյան շրջաններից: Պատրաստված է «խնայողության» եղանակով Պրաքսիտելի դպրոցին պատկանող արձանների օրինակով:

Տղամարդու, բնական չափերի մեծ, բրոնզե քանդակի մասերը, աչքի են զարնում վարպետ գծագրությամբ, նույնիսկ փոքր- ինչ նատուրալիզմով:

Մանր քանդակներից շատ հետաքրքրական է կանացի գլուխը, որը պատկերված է, ըստ հունական դասական շրջանի քանդակագործության ավանդների: Արտաշատում ի հայտ եկած բացառիկ արժեք ունեցող գտածոներից ուշագրավ են քարայծի արծաթյա արձանիկը, բրոնզե արծվաքանդակները, կանացի ոսկրե արձանիկը, որտեղ վերջինս պատկերված է ֆաս, կանգնած ուղիղ դիրքով (բարձր. 10,6 սմ, լայն. 2,5 սմ): Կինը կրծքի մոտ ձեռքերով բռնել է թաս՝ ջրային ասպվածության խորհրդանիշը: Ամենայն հավանականությամբ, արձանիկը ներկայացնում է Անահիտ ասպվածուհուն իր տեղական, ավանդական կեցվածքով (III դ.):

Մեծապես հետաքրքիր են Արտաշատից հայտնաբերված կավե արձանիկները[60], որոնք հելլենիստական մշակույթի ազդեցության արգասիք են: Դրանք հնարավորություն են տալիս ուսումնասիրել Հայաստանի արվեստի մի նոր, կարեւոր ոլորտ՝ կոռոպլաստիկան: Պաշտամունքային բնույթի այդ արձանիկները ներկայացնում են հին հայկական եւ հունական դիցարանի աստվածներին՝ Անահիտին եւ Միհրին, տարբեր կոմպոզիցիաներով (հեծյալ եւ ձեռքերը կողքերին հաղթականորեն կանթած), Աֆրոդիտե-Աստղիկին, Հերակլես-Վահագնին, Դիոնիսին, սրնգահար Ատրիս-Արային, Սիլենին, Ամուրին եւ այլն, եւ պաշտամունքային ծիսակատարությունների հետ կապված երաժիշտների՝ քնարահարների, սազ նվագողների, ծիսական պար կատարող քուրմի, ինչպես նաեւ դիմակներ եւ այլն: Այսինքն, այստեղ հունական եւ հայկական աստվածների պատկերները հանդիպում են միասին, արտահայտելով այդ շրջանի հայկական արվեստի եւ պաշտամունքի սինկրետիկ բնույթը:

Վերոհիշյալ կավե արձանիկները, ամենայն հավանականությամբ Անահիտի եւ Միհրի պաշտամունքային պաշտոնական կերպարների, մոնումենտալ քանդակների ազատ արված տարբերակներն են:

Հասարակական բաղնիքի հանդերձարանի (V սենյակ) հարավային պատին ներքուստ առաջին սվաղի վրա պահպանվել են սրածայր գործիքով խազելու եղանակով

59 Տե՛ս **Բ. Ն. Առաքելյան,** Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Երեւան, 1976, էջ 22-23. տախտ. XXII-XXIII, 1: **Г.А.Тирацян,** Культура древней Армении VI в.до н.э.-III в.н.э (по археологическим данным), Ереван, 1988, էջ 114, աղ. XXIII:

60 Տե՛ս **Ժ. Դ. Խաչատրյան,** Հայաստանի անտիկ շրջանի կոռոպլաստիկան, ԼՀԳ, 1977, թ. 3, էջ 37-60. **Ж. Д. Хачатрян**, Об античной коропластике Армении, ВДИ, 1979, թ. 3, էջ 87-103:

(graffiti) նկարազարդած կանգնած եւ հեծյալ զրոամարդու արձաններ: Պանոյում պատկերները բազմապլանային են: Արված են ազատ անկաշկանդ ոճով, տարբեր մարդկանց կողմից: Երբեմն կատարված են անփույթ, կամ մանրամասները չեն գրված: Երբեմն էլ շատ արտահայտիչ են ներկայացված, համեմատաբար մանրամասն: Մարդիկ պատկերված են դիմահայաց (ֆաս) լայն բացած ոտքերով: Հեծյալները եւ առանձին նժույգները պատկերված են ընդհանուր գծերով, սակայն դինամիկ շարժման վիճակում, հեծյալի իրանը եւ գլուխը դրված են ճակատային, նժույգները՝ պրոֆիլ, սլացիկ քառատրոփ արշավի, թռիչքի դիրքով («flaying gallop»): Առջեւի եւ հետեւի ոտքերը խիստ ձգված են եւ գտնվում են գրեթե մի հորիզոնականի վրա: Պատկերված են որսի տեսարաններ, որոնք թվագրվում են IV դարով[61] : Ժողովրդական ստեղծագործության այս եղանակը, գրաֆիտին, վաղուց ծանոթ էր հին աշխարհին, Հայկական լեռնաշխարհում այն սկսել է կիրառվել V-IV հազարամյակից եւ հարատեւել է մինչեւ մեր օրերը:

Արտաշատի գեղարվեստական խեցեղենը ներկայացված է գունազարդ, ռելիեֆ զարդերով եւ կենդանակերպ անոթներով: Հայտնաբերվել են տարբեր կենդանիներ պատկերող պաշտամունքային անոթներ եւ արձանիկներ՝ արջեր, եղջերուներ, ձիեր, ցուլեր, ոչխարներ, թռչուններ, որոնք կերտվել են մեծ վարպետությամբ: Ուշագրավ է երկկանթ կարասը, որի ուսին ռելիեֆ պատկերված է սրբազան որսի տեսարան՝ հեծյալը շներով հետապնդում է եղջերուներին եւ այծերին (մ.թ. Ադ.):

Հելլենիստական եւ հռոմեական գեղարվեստական կենցաղային իրերի ներմուծումը Հայաստան նպաստեցին անտիկ ավանդույթների լայն տարածմանը: Վերնահատակի ձգտումը շքեղության եւ իրենց կենցաղը գեղարվեստական իրերով հարստացնելու ցանկությունն ավելի է ուժեղանում:

Քաղաքի երեք դամբանադաշտերի եւ տարբեր հատվածներում պեղված թաղումների ուսումնասիրությունը[62] լրացնում է քաղաքից հայտնաբերված նյութերի ժողովածուն : Դրանք շատ կարեւոր նյութեր են մատակարարում Հայաստանի նյութական եւ հոգեւոր մշակույթի, քաղաքի ու քաղաքային կյանքի ուսումնասիրության համար: Դամբանադաշտերը միմյանցից տարբերվում են թաղման որոշ ձեւերով ու արարողություններով (դիակիզման, կարասների, փայտե դագաղների եւ կավե սարկոֆագների մեջ):

Ուշագրավ են թաղման ծիսակատարության հետ կապված սովորությունները՝ հոգեհացի արարողության ձեւերը, ծիսակատարությունների ժամանակ աղորիքներ ու երկանքներ, հեղում կատարելու համար ջրի խողովակներ օգտագործելը, հանգուցյալի հետ ձու, մարդու կավե արձանիկներ, փայտածիսի կտորներ դնելը, կարոսի ոսկե տերեւներից կազմված հուղարկավորության պսակ, շրթնակալ, դրամներ դնելը[63] եւ այլն:

Դամբարանների պեղումները հնարավորություն են տալիս ավելի լավ պատկերացում կազմելու ուշ հելլենիստական եւ մ.թ. առաջին դարերի թաղման ձեւերի ու ծիսակատարությունների, բնակչության, նրա ընկերային կազմի, տեղական եւ զաղթեցված, օտար

61 Տե՛ս **Ժորես Խաչատրյան,** Հին Հայաստանի մայրաքաղաք Արտաշատը շարունակում է անակնկալներ մատուցել, «Էջմիածին», 2010, դեկտեմբեր, էջ 43-53, նկ. 21-27:

62 Տե՛ս Արտաշատ, II, էջ 31-64:

63 Տե՛ս **Ж. Д. Хачатрян,** Эллинистические традиции в захоронениях и погребальных обрядах Армении. "Проблемы античной истории и культуры" II, Ереван, 1979, էջ 427-432:

բնակչության հնարավոր տեղաբաշխման, սովորույթների, նախասիրությունների, կապերի, ազդեցությունների ու փոխներթափանցումների զարգացման ասպիճանի մասին:

Ուշ անտիկ շրջանում դեռևս շարունակում են զարգանալ ու տարածվել հելլենիստական ավանդները: Հռոմն Արևելքում հանդես էր գալիս «հելլենիզմի փրկարարի» դերում[64] և հենվում էր հելլենիստական քաղաքների ու այդ մշակույթը կրող վերնախավի վրա: Հայաստանի այդ շրջանի մշակույթի վրա զգալի է հռոմեական մշակույթի ազդեցությունը: Դա նկատելի է առաջին հերթին քաղաքաշինության, շինարարական տեխնիկայի, ճարտարապետության և այլ ասպարեզներում:

Արտաշատը հանդիսանալով մայրաքաղաք դարձավ՝ Հայաստանի քաղաքական ու տնտեսական հզորության մարմնավորումը: Այն իր ստրատեգիական դիրքի և տնտեսական բարենպաստ պայմանների շնորհիվ, շուրջ վեց հարյուր տարուց ավելի պահպանեց Հայոց աշխարհի առաջին քաղաքի դերը: Ոչ փառահեղ կառուցված Տիգրանակերտը, ոչ էլ հռոմեացիների կողմից, հիեռուկս Արտաշատի, մայրաքաղաքի վերածված Վաղարշապատը, ի զորու չեղան խամրեցնելու նրա փառքը հայ ժողովրդի կյանքում այնքան կարևոր դեր չխաղացին, ինչպես Հայոց Մեծ Արքայի հիմնադրած հրաշք Արտաշատ մայրաքաղաքը: Հայաստանի նյութական մշակույթի թագն ու պսակը կազմող Արտաշատ մայրաքաղաքի բազմահարուստ հնագիտական ընդերքի համակողմանի ուսումնասիրությունը հավաստում է Հայաստանի բոլոր ժամանակների ամենահզոր Արքայի՝ Արտաշես Առաջինի անօրինակ, զարմանահրաշ վիթխարի մեծագործությունը:

64 Տես **Д. Шлюмберже,** Эллинизированный Восток, Москва, 1985, էջ 19: